

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

31.03.2014թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 58 անդամներից ներկա էին 53-ը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ֆակուլտետի դեկանի և ամբիոնների վարիչների ընտրություններ:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան,

մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյան

1.1. Ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի ծրագրի հակիրճ ներկայացում:

Հաղ.՝ մ.գ.թ., դոցենտ Ա. Խաչատրյան

1.2. Փիլիսոփայության և հասարակագիտության ամբիոնի ծրագրի հակիրճ ներկայացում:

Հաղ.՝ փ.գ.թ., դոցենտ Հ. Հարոյան

1.3. Կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի ծրագրի հակիրճ ներկայացում:

Հաղ.՝ կ.գ.թ., դոցենտ Ա. Գրիգորյան

1.4. Արտասահմանյան գրականության ամբիոնի ծրագրի հակիրճ ներկայացում:

Հաղ.՝ բ.գ.թ., դոցենտ Է. Մաթևոսյան

1.5. Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ծրագրի հակիրճ ներկայացում:

Հաղ.՝ բ.գ.դ., դոցենտ Գ. Ամբարդարյան

1.6. Պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի ծրագրի հակիրճ ներկայացում:

Հաղ.՝ պ.գ.թ., դոցենտ Ե. Վարդանյան

2. Ընթացակարգերի հաստատում.

2.1. «ԳՊՄԻ» ՊՈԱԿ-ի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման ընթացակարգ,

2.2. «ԳՊՄԻ» ՊՈԱԿ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և պաշտպանության ընթացակարգ:

Ձեկ.՝ կանոնակարգերի և ընթացակարգերի մշակման ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Ս. Հայրապետյան

3. «ԳՊՄԻ» ՊՈԱԿ-ի ուսանողների կուրսային աշխատանքների պատրաստման և գնահատման կանոնակարգի քննարկում:

Ձեկ.՝ կանոնակարգերի և ընթացակարգերի մշակման ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Ս. Հայրապետյան

4. Մասնագիտական կրթական ծրագրերի և աշխատաշուկայի պահանջների համապատասխանության վերաբերյալ սոցիոլոգիական հարցաթերթիկների քննարկում:

Հաղ.՝ գիտական խորհրդի որակի ապահովման և վերահսկման հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ս. Սարգսյան

5. Ընթացիկ հարցեր:

5.1. ԳՊՄԻ-ի պատմության և իրավագիտության ամբիոնի դասախոս, պ.գ.թ. Հովհաննես Խորիկյանի «Կովկասի պատմության հիմնահարցեր» վերտառությամբ դասախոսությունների նյութերը հրատարակության երաշխավորելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

5.2. Ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վարդուհի Ստեփանյանի «Մամուլի լեզու» (Langue de la presse) ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

5.3. Սիրիայի հայաբնակ Քեսաբ ավանի տարհանված բնակիչներին դրամական օգնություն տրամադրելու համար բուհի ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում դրամահավաք կազմակերպելու մասին:

Հաղ.՝ արհեստակցական կազմակերպության նախագահ Վ. Խաչատրյան

Ռեկտոր Վ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 53 անդամներ. կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյանի հաղորդումը բուհի ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի դեկանի ու փիլիսոփայության և հասարակագիտության, կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների, արտասահմանյան գրականության, ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի, պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնների վարիչների ընտրությունների մասին:

Վ. Գրիգորյանը դեկանի և ամբիոնների վարիչների թափուր տեղերի թեկնածուների ցուցակի ներկայացումից հետո խոսքը փոխանցեց բուհի մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյանին, ում հաղորդմամբ՝

ա/Ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնատեղի համար դիմել է Ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մ.գ.թ., դոցենտ Արթուր Խաչատրյանը, բ/փիլիսոփայության և հասարակագիտության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է նույն ամբիոնի դասախոս, փ.գ.թ., դոցենտ Հայկ Հարոյանը,

գ/կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է նույն ամբիոնի դասախոս, կ.գ.թ., դոցենտ Անգին Գրիգորյանը,

դ/արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է նույն ամբիոնի դասախոս, բ.գ.թ., դոցենտ Էվելինա Մաթևոսյանը,

ե/ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է նույն ամբիոնի դասախոս, բ.գ.դ., դոցենտ Գայանե Ամբարդարյանը:

զ/պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է նույն ամբիոնի դասախոս, պ.գ.թ., դոցենտ Ելենա Վարդանյանը:

Ա. Ֆարմանյանը ներկայացրեց համապատասխան ձևայնացված կարգավիճակները զբաղեցնելու համար դիմած թեկնածուների ինքնակենսագրությունները, վերջին 5 տարիների ընթացքում հրատարակված գիտական աշխատանքների թիվը, ֆակուլտետի խորհուրդների որոշումները և, իհարկե, յուրաքանչյուր թեկնածուի մասնագիտական ու մանկավարժական որակների վերաբերյալ գնահատականները՝ հիմնված ուսանողների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքում ստացված տվյալների վերլուծման և ընդհանրացման վրա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկան Ա. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Կազմակերպել՝ ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի դեկանի ու փիլիսոփայության և հասարակագիտության, կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների, արտասահմանյան գրականության, ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի, պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման

մեթոդիկաների ամբիոնների վարիչների ընտրության փակ (գաղտնի) քվեարկություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 53 անդամներ. կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահը գիտական խորհրդի անդամներին փակ (գաղտնի) քվեարկության կարգը ներկայացնելուց հետո առաջարկեց գիտական խորհրդի անդամներից ընտրել առնվազն 3 հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով՝ փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար:

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝

1. Խաչատրյան Վալերի,
2. Սողոյան Սպարտակ,
3. Հովհաննիսյան Սոֆյա:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 53 անդամներ. կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Փակ (գաղտնի) քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Վ. Խաչատրյանը հրապարակեց քվեարկության արդյունքները.

N	Թեկնածուի ազգանուն, անուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Խաչատրյան Արթուր	46	6	1
2.	Հարոյան Հայկ	41	10	2
3.	Գրիգորյան Անգին	52	0	1
4.	Մաթևոսյան Էվելինա	46	5	2
5.	Ամբարդարյան Գայանե	39	13	1
6.	Վարդանյան Ելենա	34	17	2

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի կողմից ներկայացված գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները:

2. ա/ Մ.գ.թ., դոցենտ Արթուր Խաչատրյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի ղեկանի պաշտոնում:

բ/ Փ.գ.թ., դոցենտ Հայկ Հարոյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով փիլիսոփայության և հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտոնում:

գ/ Կ.գ.թ., դոցենտ Անգին Գրիգորյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչի պաշտոնում:

դ/ Բ.գ.թ., դոցենտ Էվելինա Մաթևոսյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչի պաշտոնում:

ե/ Բ.գ.դ., դոցենտ Գայանե Ամբարդարյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

զ/Պ.գ.թ., դոցենտ Ելենա Վարդանյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչի պաշտոնում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 53 անդամներ. կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ.-

«ԳՊՄԻ» ՊՈԱԿ-ի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման ու «ԳՊՄԻ» ՊՈԱԿ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և պաշտպանության ընթացակարգերի հաստատման մասին (Զեկ.՝ կանոնակարգերի և ընթացակարգերի մշակման ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Ս. Հայրապետյան):

Ս. Հայրապետյանն իր ելույթում նշեց, որ հանձնաժողովը, հաշվի առնվելով բուհի ստորաբաժանումների, մասնավորապես՝ ամբիոնների կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները, 2 ընթացակարգերում կատարել է համապատասխան կետերի փոփոխություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1.Հաստատել «ԳՊՄԻ» ՊՈԱԿ-ի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման ընթացակարգը,

2.Հաստատել «ԳՊՄԻ» ՊՈԱԿ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և պաշտպանության ընթացակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 53 անդամներ. կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ.- «ԳՊՄԻ» ՊՈԱԿ-ի ուսանողների կուրսային աշխատանքների պատրաստման և գնահատման կանոնակարգի քննարկում (Ձեկ.՝ կանոնակարգերի և ընթացակարգերի մշակման ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Ս. Հայրապետյան):

Ս. Հայրապետյանը ներկայացրեց «ԳՊՄԻ» ՊՈԱԿ-ի ուսանողների կուրսային աշխատանքների պատրաստման և գնահատման կանոնակարգի կառուցվածքային բաժինների ելակետային դրույթներն ու առաջարկեց 1 շաբաթվա ընթացքում հանձնաժողովին ներկայացնել համապատասխան առաջարկությունների փաթեթը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ուսումնամեթոդական վարչության պետ Բ. Պողոսյանը, բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկան Ա. Գրիգորյանը, մանկավարժության ֆակուլտետի դեկան Ռ. Մարդոյանը, տնտեսագիտության ամբիոնի վարիչ Թ. Սիմոնյանը, ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր Բ. Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հանձնարարել կանոնակարգերի և ընթացակարգերի մշակման ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Ս. Հայրապետյանին «ԳՊՄԻ» ՊՈԱԿ-ի ուսանողների կուրսային աշխատանքների պատրաստման և գնահատման կանոնակարգում համապատասխան փոփոխությունների կատարմանն ուղղված աշխատանքների կոորդինացումը՝ հաշվի առնելով բուհի առանձին աշխատակիցների, կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված առաջարկությունների փաթեթները:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 53 անդամներ. կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՍԵՑԻՆ.- Մասնագիտական կրթական ծրագրերի և աշխատաշուկայի պահանջների համապատասխանության վերաբերյալ սոցիոլոգիական հարցաթերթիկների քննարկում (Հաղ.՝ գիտական խորհրդի որակի ապահովման և վերահսկման հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ս. Սարգսյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել մասնագիտական կրթական ծրագրերի և աշխատաշուկայի պահանջների համապատասխանության վերաբերյալ սոցիոլոգիական հարցաթերթիկները:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 53 անդամներ. կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5.ԼՍԵՑԻՆ.- Ընթացիկ հարցեր:

5.1.ԼՍԵՑԻՆ.- Ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վարդուհի Ստեփանյանի «Մամուլի լեզու» (Langue de la presse) ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին (Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Երաշխավորել հրատարակության ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վարդուհի Ստեփանյանի «Մամուլի լեզու» ուսումնամեթոդական ձեռնարկը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 53 անդամներ. կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5.2.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի պատմության և իրավագիտության ամբիոնի դասախոս, պ.գ.թ. Հովհաննես Խորիկյանի «Կովկասի պատմության հիմնահարցեր» վերտառությամբ դասախոսությունների նյութերը հրատարակության երաշխավորելու մասին (Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Երաշխավորել հրատարակության ԳՊՄԻ-ի պատմության և իրավագիտության ամբիոնի դասախոս, պ.գ.թ. Հովհաննես Խորիկյանի «Կովկասի պատմության հիմնահարցեր» վերտառությամբ դասախոսությունների նյութերը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 53 անդամներ. կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5.3. ԼՍԵՑԻՆ.- Միրիայի հայաբնակ Քեսաբ ավանի տարհանված բնակիչներին դրամական օգնություն տրամադրելու համար բուհի ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում դրամահավաք կազմակերպելու մասին (Հաղ.՝ արհեստակցական կազմակերպության նախագահ Վ. Խաչատրյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հավանություն տալ բուհի ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում դրամահավաք կազմակերպելու աշխատանքներին՝ ուղղված քեսաբահայության նյութական աջակցմանը:

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան